

Անուն \_\_\_\_\_

Ամսաթիվ \_\_\_\_\_

**Թեմատիկ ստուգում**  
**«Բնություն» առարկայից**  
**5-րդ դասարան**

1. Գրի՛ր հետևյալ գործընթացներից յուրաքանչյուրը նկարագրող բառերը.

ա) գազը վերածվում է հեղուկի \_\_\_\_\_

բ) պինդ մարմինը վերածվում է հեղուկի \_\_\_\_\_

գ) ջուրը վերածվում է սառույցի \_\_\_\_\_

2. Շոգեգոյացումը նյութի անցումն է հեղուկից գազային վիճակի, գոյություն ունի շոգեգոյացման երկու տեսակ, գրի՛ր, թե որոնք են դրանք.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

2. Տեղադրի՛ր հետևյալ բաց թողնված բառերը

**արագ, պոկվում, հեռանալ, գոլորշի, արագ**

Ջրափոսը տաք եղանակին ավելի \_\_\_\_\_ է չորանում, քան ցուրտ եղանակին, քանի որ ջրի մասնիկները տաքանալով, սկսում են շարժվել ավելի \_\_\_\_\_ և միմյանցից \_\_\_\_\_ են, որի արդյունքում որոշ մասնիկներ հեղուկի մակերևույթից կարողանում են \_\_\_\_\_ և վեր են ածվում \_\_\_\_\_ :  
\_\_\_\_\_ :

3. Նշի՛ր երեք գործոն, որոնք ազդում են հեղուկի գոլորշացման արագության վրա:

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

4. Նկարագրի՛ր ջրի շրջապտույտը և այդ շրջապտույտում գոլորշացման, խտացման, պնդացման և հալման գործընթացների դերը:

5. Սառույցը հալվում է 0°C-ում և վեր է ածվում հեղուկի, իսկ ո՞ր ջերմաստիճանում է ջուրը պնդանում և վերածվում սառույցի\_\_\_\_\_

6. Երբ բերանով արտաշնչում ենք ապակու վրա, դրա վրա կարող ենք տեսնել ջրի մանր կաթիլներ: Ներկայացրո՛ւ, թե որ գործընթացի արդյունքում և ինչպես են դրանք ձևավորվում:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

7. Տեղադրի՛ր հետևյալ բաց թողնված բառերն ու բառակապակցությունը.

**լուծույթ, խառնուրդ, լուծիչ, լուծված նյութ**

Երբ կերակրի աղը լցնում ենք ջրի մեջ և խառնում, ստանում ենք աղաջրի \_\_\_\_\_, որում աղը հանդիսանում է \_\_\_\_\_, իսկ ջուրը՝ \_\_\_\_\_:

Երբ ավազն ենք լցնում ջրի մեջ և խառնում, ստանում ենք ավազի և ջրի \_\_\_\_\_:

Այն լուծույթ չէ, քանի որ ավազի առանձին հատիկները կարող ենք տեսնել ջրի մեջ:

8. Ո՞ր գործընթացի շնորհիվ կարելի է աղի ջրային լուծույթից պինդ աղ ստանալ, նկարագրի՛ր այն:

---



---



---




---

9. Աշակերտները փորձի օգնությամբ հետազոտել են ջրի եռման գործընթացը: Ջրի տաքացման ընթացքում 2 րոպեն մեկ չափել են ջրի ջերմաստիճանն ու գրանցել հետևյալ աղյուսակում:

Ժամանակ, րոպե	2	4	6	8	10	12
Ջերմաստիճան, °C	40	60	80	100	100	100

Կառուցի՛ր գծային գրաֆիկ աղյուսակում ներկայացված արդյունքների հիման վրա: Առաջին կետը նշված է գրաֆիկում որպես օրինակ գրաֆիկի մնացած կետերը նշելու համար:



Ա. Նայելով աղյուսակի տվյալներին՝ գրիր՝ որն է ջրի եռման ջերմաստիճանը——

Բ. Եթե աշակերտները շարունակեին տաքացնել ջուրը, ապա 14-րդ րոպեին որքան կլիներ ամանի մեջ եղած ջրի ջերմաստիճանը——

Բացատրի՛ր պատասխանդ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_